4. Նպաստներ և ծառայություններ

Blue Shield Promise-ի ապահովագրական ծածկույթում ներառված Medi-Cal-ի նպաստներ

Ատամնաբուժական ծառայություններ

Ատամնաբուժական ծառայությունները տրամադրելու համար Medi-Cal-ն օգտվում է կառավարվող խնամքի պլաններից: ~~Լրացուցիչ տեղեկությունների համար անցեք Health Care Options բաժինը http://dhcs.ca.goc/mymedi-cal կայքում:~~ Դուք կարող եք մնալ Վճարովի ատամնաբուժական ծառայությունների պլանում կամ կարող եք ընտրել Կառավարվող ատամնաբուժական խնամքի պլանը: Ատամնաբուժական պլանը ընտրելու կամ փոխելու համար զանգահարեք Health Care Options բաժնի հեռախոսահամարով՝ 1-800-430-4263: Դուք չեք կարող միաժամանակ գրանցված լինել Program of All-Inclusive Care for the Elderly (PACE, Տարեցների համապարփակ խնամքի ծրագիր) կամ Senior Care Action Network (SCAN, Տարեցների խնամքի միջոցների ապահովման ցանց) պլանում և Կառավարվող ատամնաբուժական խնամքի պլանում:

~~Medi-Cal-ի ատամնաբուժական ծառայությունները տրամադրվում են Medi-Cal-ի Կառավարվող ատամնաբուժական խնամքի ծրագրով: Ատամնաբույժ գտնելու կամ ատամնաբուժական ծառայությունների հետ կապված օգնություն ստանալու համար կարող եք զանգահարել Անդամների սպասարկման կենտրոն՝ 1-888-839-9909 (TTY՝ 711) հեռախոսահամարով:~~

Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթում ներառված են հետևյալ ատամնաբուժական ծառայությունները՝

- Ախտորոշիչ և կանխարգելիչ ատամնաբուժական ծառայություններ, օրինակ՝ բուժզննում, ռենտգեն հետազոտություն և ատամների մաքրում
- Ատամնացավի դեպքում շտապ օգնության ծառայություններ
- Ատամների հեռացում
- Ատամնալիցք
- Ատամնանյարդի բուժում (առջևի/հետևի)
- Ատամնապսակներ (հավաքովի/լաբորատոր)
- Ատամների արմատների մակերեսի մաքրում և հարթեցում
- Ամբողջական և մասնակի պրոթեզներ
- Օրթոդոնտիկ ծառայություններ չափանիշներին համապատասխանող երեխաների համար
- Տեղային օգտագործման ֆտորիդների կիրառում

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ ատամնաբուժական ծառայությունների մասին, զանգահարեք Medi-Cal-ի Ատամնաբուժական ծրագիր՝ 1-800-322-6384 (TTY՝ 1-800-735-2922 կամ 711) հեռախոսահամարով: Կարող եք նաև այցելել Medi-Cal-ի Ատամնաբուժական ծրագրի կայք՝ https://smilecalifornia.org/:

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ ատամնաբուժական ծառայությունների մասին և գրանցված եք Կառավարվող ատամնաբուժական խնամքի պլանում, զանգահարեք ձեզ նշանակված Կառավարվող ատամնաբուժական խնամքի պլան:

Blue Shield Promise-ի ապահովագրական ծածկույթում ներառված այլ նպաստներ և ծրագրեր

Կարևոր օրգանների փոխպատվաստում

Փոխպատվաստումներ մինչև 21 տարեկան երեխաների համար

Լոս Անջելես վարչաշրջանում նահանգային օրենքով պահանջվում է, որպեսզի փոխպատվաստման կարիք ունեցող երեխաներն ուղեգրվեն California Children's Services (CCS, Կալիֆոռնիայի Երեխաներին տրամադրվող ծառայությունների) ծրագիր՝ որոշելու, արդյոք երեխան համապատասխանում է CCS-ից օգտվելու պահանջներին, թե ոչ: Եթե երեխան համապատասխանում է CCS-ից օգտվելու պահանջներին, CCS-ն կհատուցի փոխպատվաստման և հարակից ծառայությունների ծախսերը:

Եթե երեխան չի համապատասխանում CCS-ից օգտվելու պահանջներին, Blue Shield Promise-ը երեխային կուղարկի որակավորված փոխպատվաստման կենտրոն՝ գնահատման համար: Եթե փոխպատվաստման կենտրոնը հաստատի, որ փոխպատվաստումն անհրաժեշտ է և անվտանգ, Blue Shield Promise-ը կհատուցի փոխպատվաստման և հարակից ծառայությունների համար:

~~Blue Shield Promise-ը պետք է ուղեգրի California Children's Services (CCS) ծրագրից օգտվելու իրավունք ունեցող երեխաներին CCS-ի կողմից հաստատված Special Care Center (SCC, Հատուկ խնամքի կենտրոն)՝ իրականացնելու գնահատում 72 ժամվա ընթացքում, երբ երեխայի բժիշկը կամ մասնագետը հաստատի երեխային որպես փոխպատվաստման հավանական թեկնածու: Եթե SCC-ն հաստատի, որ փոխպատվաստումն անհրաժեշտ է և անվտանգ, Blue Shield Promise-ը կհատուցի փոխպատվաստման և հարակից ծառայությունների համար.~~

~~CCS-ի հետ կապված տրանսպորտային և ճամփորդական ծախսեր~~

~~Դուք կարող եք ստանալ հատուցում տրանսպորտային, սննդի, կացարանի և այլ ծախսերի, օրինակ՝ ավտոկայանատեղի, մաքսատուրքերի և այլնի համար, եթե դուք կամ ձեր ընտանիքն օգնության կարիք ունի՝ բժշկական այց կատարելու համար CCS-~~

~~ծրագրով հաստատված առողջական խնդրի հետ կապված, և այլ հասանելի ռեսուրս չկա: Դուք պետք է զանգահարեք Blue Shield Promise և խնդրեք նախօրոք հաստատում (նախնական թույլտվություն)՝ նախքան ձեր գրպանից վճարելը տրանսպորտի, սնունդի և կացարանի համար: Blue Shield Promise-ը տրամադրում է ոչ բժշկական և ոչ շտապ բժշկական փոխադրումների ծառայություններ, ինչպես նշված է 4-րդ գլխում՝ «Նպաստներ և ծառայություններ»:~~

~~Եթե ձեր տրանսպորտային կամ ճամփորդական ծախսերն անհրաժեշտ են, և Blue Shield Promise-ը հաստատում է, որ դուք փորձել եք փոխադրամիջոց գտնել Blue Shield Promise-ի միջոցով, կարող եք փոխհատուցում ստանալ Blue Shield Promise-ից: Մենք պարտավոր ենք փոխհատուցել ձեզ 60 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ դուք կներկայացնեք պահանջվող անդորրագրերը և տրանսպորտային ծախսերի ապացույցը:~~

~~Տնային և համայնքային ծառայություններ (HCBS)՝ Waiver Case Manager-ի (WCM, Հրաժարման հոգեբուժական մենեջերի) ծառայություններից դուրս~~

~~Եթե դուք իրավունք ունեք գրանցվելու 1915(c) հրաժարման ծրագրում, դուք կարող եք ստանալ տնային և համայնքային ծառայություններ, որոնք կապված չեն CCS ծրագրով հաստատված առողջական խնդրի հետ, սակայն անհրաժեշտ են, որպեսզի դուք մնաք համայնքային միջավայրում, այլ ոչ թե հաստատությունում: Օրինակ, եթե ձեզ անհրաժեշտ է տանը փոփոխություններ կատարել՝ համայնքային միջավայրում ապրելու ձեր կարիքները բավարարելու համար, Blue Shield Promise-ը չի կարող վճարել այդ ծախսերը՝ CCS ծրագրով հաստատված առողջական խնդրի շրջանակներում: Բայց եթե դուք գրանցված եք 1915(c) հրաժարման ծրագրում, տանը կատարված փոփոխությունները կարող են փոխհատուցվել, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են՝ հաստատությունում կացությունը կանխելու համար:~~